ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/254

«08» Հոկտեմբերի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 44-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 7 » Հոկտեմբերի 2019 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՅՈԼԱԿ ԼՅՈՎԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ԱՐԱՄ ՄԻՔԱՅԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՋԵՊԵՏ ՓԱՅԼԱԿԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-Ի 2019թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 1107 գրությունը և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թվականի ապրիլի 26-ի թիվ ԼԴ/2910/02/18 քաղաքացիական գործով հրապարակված վճիռը՝

Որոշում եմ

1. Հաստատել Ձորագետ համայնքի վարչական տարածքում գտնվող ընդհանուր սեփականություն հանդիսացող 06-065-0016-0008 ծածկագրով անշարժ գույքի՝ 0.4999հա բնակավայրի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցման գործառնական նշանակության հողամասի տարանջատման սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. 06-065-0016-0008 ծածկագրից առանձնացված 0.49391հա հողամասին և նույն հողամասում գտնվող 284.46քմ շինություններին տրամադրել գ.Ձորագետ 1 փողոց 77 տուն փոստային հասցեն:
3. 06-065-0016-0008 ծածկագրից առանձնացված 0.00595 հա հողամասին տրամադրել գ. Ձորագետ 1 փողոց 77/1 փոստային հասցեն:
4. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. Հոկտեմբերի 7
հ. Ձորագետ